ՄԱՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԻՆՔՆԱԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ: ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՆՔՆԱԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Ժամանակակից քաղաքակիրթ մարդու ձեռքբերումներից ամենանշանակալին, թերևս, ինքնագիտակցությունն է: Այն սոցիալ - հոգեբանական պատմամշակութային ֆենոմեն է: Այդ առումով հիմնախնդրի նկատմամբ մեթոդաբանական և մեթոդական մոտեցումները բոլոր ժամանակներում անմիջականորեն պայմանավորված են եղել այն հասարակարգի կառուցվածքային առանձնահատկություններով, որտեղ իր կենսագործունեությունն է իրականացրել ինքնագիտակցող մարդը:

Սկսելով մեր դիտարկումները մարդկության զարգացման ակունքներից պիտի նշենք, որ անձի հոգեկան զարգացման ամենավաղ շրջանի վերաբերյալ բազմապիսի ուսումնասիրությունները համակարծիք են այն պնդման մեջ, որ նախնադարյան համայնական կարգերում ապրող մարդու հոգեկանում ինքնագիտակցության արտահայտված է բավական թույլ:

Նախամարդը ոչ մի դեպքում հանդես չի գալիս որպես իր գործունեության միակ, եզակի ու բացառիկ սուբյեկտ: Նրա յուրաքանչյուր դրսևորման մեջ ներգրավված են ցեղակիցները, նախնիները, հոգիները, աստվածները:

Հոգին, որպես գիտակցության, ակտիվ Ես-ի նախատիպ, հանդես է գալիս որպես համընդհանուր կենսաուժ, որը, չառանձնացնելով մարդուն աշխարհից, միավորում է նրան համընդհանուր տիեզերքի հետ: Այդ պատճառով նախամարդը հոգեբանական առումով տարրալուծված է իր հասարակության մեջ որպես այդ օրգանական ամբողջության մասնիկ:

Անձի հոգեկանում ինքնաիմացության պահանջմունքի ակտիվացման, հոգեկանում ինքնագիտակցության տեսակարար կշռի ավելացման համար անմիջական խթան են հասարակական տնտեսական հարաբերությունների հետագա զարգացումը, աշխատանքի բաժանումն ու դրան ուղեկցող սոցիալական անհավասարությունը:

Այդ գործընթացների ծավալման արդյունքում անհատը աստիճանաբար առանձնացնելով իրեն հասարակությունից սկսում է գիտակցել իրեն որպես գործունեության սուբյեկտի, հարստանում և տարբերակվում է նրա ներաշխարհը, ակտիվորեն զարգանում են գիտակցական ինքնագնահատման ու ինքնակարգավորման ունակությունները:

Արդեն հին արևելքում մարդու կողմից սեփական Ես-ի իմացությունը վերածվում է իմացտաբանության առանցքային հիմնախնդրի:

Անհրաժեշտ է նշել, որ հին արևելյան կրոնափիլիսոփայական ուսմունքներում, ինքնաիմացությունը հիմնախնդրի մեկնաբանությունը որոշակիորեն արտահայտված միստիկական երանգավորում ունի:

Այս երևույթը մի շարք ուսումնասիրողներ պայմանավորում են հասարակական հարաբերությունների առանձնահատկություններով որպես համատարած տոտալիտարիզմի և դեսպոտիզմի, կաստայական, դասակարգային և այլ սահմանափակումների արդյունք:

Սրանով է, թերևս, բացատրվում նաև այն հանգամանքը, որ հին արևելքում ինքնաիմացություն գերխնդիրն էր մարդու հաղորդակցումը գերբնականի «տիեզերական գիտակցության» հետ, վերջնական նպատակը ինքնատարրալուծումը տիեզերական անվերջության մեջ:

Ինքնաիմացության հիմնական մեթոդը, այստեղ, մտահայեցումն էր մեդիտացիան: Հին արևելյան մտածողները համարում էին, որ միայն այս ճանապարհով է անհատը ընդունակ իրապես ճանաչել ինքն իրեն, տիրապետել իրական իմաստության, ընդլայնել սեփական Ես-ի սահմանները:

Այսպես վեդանտայում տարբերակվում է անհատական Ես, իրական Ես «ատման» և տիեզերական գիտակցություն «բրահման» կատեգորիաները: Անհատական Ես-ի «աստվածային բնույթը թաքնված է զգայական ընկալման և մարմնական մղումներից հոսքում: Ինքնաիմացության և ասկետական կենսաձևի պահպանման ճանապարհով անհատական Ես-ը ազատագրվում է զգայական ընկալումներից ու մարմնական մղումներից վերածվում է իրական ես-ի, որը նույնական է տիեզերական գիտակցության «Բրահմանի» հետ:

Համանման տեսակետ է արտահայտվում նաև ջայնիստական (մ.թ.ա. 6 - դ.) ուսմուքում: Ջայնիստները համարում են, որ հոգին իր բնույթով կատարյալ է, դրա հնարավորությունները անսահման, որոնք բացահայտվում են միայն ինքնաիմացության միջոցով, երբ հոգին ազատագրվելով մարմնային կրքերից, հաղորդակից է դառնում տիեզերական գիտակցությանը (1):

Չնայած գերիշխող այս մոտեցմանը հին արևելքում կային նաև մտածողներ, որոնք դիտարկում և մեկնաբանում էին հիմնախնդիրը այլ տեսանկյունով, առաջ քաշելով ինքնաիմացությանն ու սեփական Ես-ի գիտակցմանը վերաբերվող այնպիսի հարցեր, ինչպիսիք են սուբյեկտի կողմից սեփական մտավոր գործունեության ճանաչումը, գիտակցության ու ինքնագիտակցության հարաբերակցության առանձնահատկություններն ու օրինաչափությունները, մարդու կողմից սեփական Ես-ի ընկալման գործում մտածողության և զգացմունքների իրականացրած գործառույթները և այլն:

Արդեն հին հունական փիլիսոփայության մեջ դիտարկում ենք ինքնաիմացության հիմնախնդրի ուսումնասիրության գործում մեթոդաբանական և մեթոդական հսկայական տեղաշարժեր:

Մեթոդաբանական տեղաշարժի էությունը կայանում է նրանում, որ միստիկային աստիճանաբար փոխարինելու է գալիս ռացիոնալիզմը:

Ինքնաիմացությունը, որպես հոգեկան երևույթ քննարկվում է հասարակության մեջ անհատի հարմարման և կայացման խնդիրների լուծման տեսանկյունով:

Ինքնաիմացության միջոց է դառնում սոցիալական համեմատությունը, չափորոշիչ համապատասխանությունը հասարակության մեջ ընդունված բարոյական արժեքներին, վարքի նորմերին ու ստանդարտներին:

Սոկրատեսը (մ. թ. ա.469 – 399թթ.) ինքնաճանաչողության իր մեթոդի հիմքում դնում է անհատի վարքի և գործունեության ինքնավերլուծությունը հասարակության մեջ ընդունված բարոյական նորմերին ու արժեքների համապատասխան՝ այդ գործում մեծապես կարևորելով մտածողության դերն ու նշանակությունը:

Մեթոդական առումով մեդիտացիային փոխարինելու է գալիս ռեֆլեքսիվ ինքնավերլուծությունը հիմնված տրամաբանական մտածողության վրա:

Ճիշտ է, հին հունական փիլիսոփայության մեջ ընդգծվում է «համընդհանուր տիեզերական գիտակցությանը» հաղորդակից լինելու կարևորությունը, սակայն ոչ մի տեղ չենք հանդիպում մեդիտացիայի կիրառության:

Այսպես՝ Հերակլիտը (մ. թ. ա. 530 – 470թթ.) համոզված էր, որ մարդու վարքն անմիջականորեն պայմանավորված է ինքնաիմացությամբ և համարում է, որ միայն իմացության շնորհիվ է հնարավոր տիրապետել բարձրագույն մարդկային իմաստնությունը, հաղորդակից լինել աշխարհը կառավարող համընդհանուր «լոգոսին»:

Այսպիսով՝ ինքնաիմացության հիմնախնդրի հին հունական մեկնաբանությունը անհրաժեշտաբար ենթադրում է հոգեկանում ինքնագիտակցության ձևավորվածության որոշակի մակարդակ:

Ճանաչելով ինքն իրեն դիտման և տրամաբանական մտածողության միջոցով անտիկ մարդը աստիճանաբար դուրս է գալիս աստվածների, առասպելական էակների և գերբնական ուժերի գերիշխանությունից, ձեռք է բերում համեմատական ինքնուրույնություն և ինքնավարություն պատասխանատություն կրելով իր վարքի ու գործունեության համար:

Ամփոփելով վերոշարադրյալը կարելի է պնդել, ինքնագիտակցությունը իր ժամանակակից գիտական մեկնաբանությամբ մեծ չափով պարտական է հին հունական փիլիսոփայությանը:

* * *

Ինքնահմացության հիմնախնդրի նկատմամբ հին աշխարհում առկա մոտեցումները նոր հնչեղություն են ստանում միջնադարյան արևմտաեվրոպական կրոնափիլիսոփայության մեջ:

Աստվածաբանական դոգմատիզմի գերակայության պայմաններում վեճը ծավալվում էր գիտակրոնական մտքի երկու հակադիր բանակների սխոլաստներ և միստիկների հայացքներում: Սխոլատները համարում էին, որ սեփական Ես-ը, ինչպես նաև աստծուն ճանաչելու միակ ուղին բանականությունն է: Միստիկները, ընդհակառակը, համոզված էին, որ ինքնահմացությունը հնարավոր է միայն աստծո հետ անմիջական, կենդանի-հաղորդակցման և սեփական անձը աստծո մեջ տարրալուծելու (միստիկական էքստազ) ճանապարհով:

Այս ենթատեքստում բացառիկ խորհրդանշական է ինքնագիտակցության աստվածաշնչյան մեկնաբանությունը: Դրանում ամբողջացած է մարդու կողմից սեփական ինքնության գիտակցման, սեփական Ես-ի իմացության ողջ դրամատիզմը պայմանավորված մի կողմից սեփական միայնակության և անօգնականության, մյուս կողմից այն անսահման հնարավորությունների և միաժամանակ հսկայական պատասխանատվության գիտակցման հետ, որը բերում է իր հետ ինքնագիտակցությունը:

Ըստ աստվածաշնչի, առաջին մարդուն դրախտից աքսորելու հիմք հանդիսացավ նրա կողմից իմացության ընդունակության ձեռք բերումը և որպես հետևանք արթնացած ինքնագիտակցությունը:

«5 Այլ Աստուած գիտէ, թէ այն օրը որ նրանից ուտէք, ձեր աչքերը կբացուին, եւ Աստուծոյ պէս կլինիք բարին և չարը գիտացող: 6 Եւ կինը տեսաւ, որ ծառը լաւ էր ուտելու համար, եւ փափաքելի է ծառը նայելու համար, առաւ նրա պտղիցը և կերաւ, եւ իր հետ իր մարդինն էլ տուաւ, եւ նա կերաւ: 7 Եւ նորանց երկուսի աչքերը բացուեցան, եւ գիտացին թէ մերկ են. եւ թզենու տերեւներ կարեցին, եւ իրանց համար ծածկոցներ շինեցին: 8 ... եւ Ադամը եւ իր կինը թաք կացին Եհովայ Աստուծոյ երեսիցը պարտէզի ծառերի մէջ: 9 Եւ Եհովայ Աստուածը կանչեց Ադամին, եւ ասեց նորան, Ու՞ր ես. Եւ նա ասեց. 10 քո ձայնը լսեցի պարտէզումը, եւ վախեցի, որովհետեւ ես մերկ էի, եւ թաք կացի...»:

«... 22 Եւ Եհովայ Աստուածն ասեց. Ահա Ադամն եղաւ իբրեւ մեզանից մէկը որ բարին եւ չարը գիտենայ, եւ հիմա մի գուցէ իր ձեռքը մեկնէ, եւ կենաց

ծառիցն էլ առնե եւ ուտէ եւ յաւիտեան ապրի. Ուստի Եհովայ Աստուածն հանեց նրան Եդէմի պարտէզից, որ երկիրը գործէ, որտեղից որ առնուած էր[1]...»:

ԵՎ իրոք, ինքնագիտակցության ձեռքբերմամբ մարդկային անհատը մեծ չափով կորցրեց հավատը գերբնականի նկատմամբ: Արդյունքում ծնվեցին մարդկության հոգեբանական, թերևս, ամենաարմատական և չլուծված մենակության, սեփական ինքնության, կյանքի իմաստի որոնման խնդիրները:

Քանզի «Շատ իմաստութեան հետ շատ տրտմութիւն կայ, եւ գիտութիւն աւելացնողը վիշտն էլ է աւելացնում»[2]:

Եվ պատահական չէ, որ «իմացության ծառի պտուղները» ճաշակելուց հետո մարդը ձգտում է «կենաց ծառին», արքնացած ինքնագիտակցությունը մղում է մարդուն ինքնակատարելագործման հաղորդակցվելու կատարյալի, աստվածայինի, հավերժականի հետ:

15-18դդ. ընթացքում ինքնաիմացության հիմնախնդրի աստվածաբանական մեկնաբանությանը աստիճանաբար փոխարինելու են գալիս էմպիրիզմն ու ռացիոնալիզմը հիմնված մեխանիստական մատերիալիզմի վրա, արդյունքում նույնացվում են «ինքնաիմացություն» և «ինքնագիտակցության» հասկացությունները:

Այս տեսակետից անցումնային կարելի է համարել ինքնագիտակցության հիմնախնդրի դեկարտյան մեկնաբանությունը: Այն, իր էությամբ լինելով ռացիոնալիստական, ունի նաև որոշակի միստիկական երանգավորում:

Քանզի Ռ. Դեկարտը (1596 – 1650թթ.) համարում էր, որ մատերիական սուբստանցիայի կողքին գոյություն ունի հոգևոր սուբստանցիա, իսկ դրանցից վերև կանգնած է աստված: Նա համոզված է, որ, աստված ինքն է միացրել հոգին մարմնին, դրանով իսկ տարանջատելով մարդուն կենդանուց:

Հիմնախնդրի ուսումնասիրության գործում Ռ. Դեկարտի հայացքները կարևորվում են երկու առումներով, նախ նա առաջին անգամ գիտական շրջանառություն ներմուծեց ռեֆլեքսիվ ինքնաարտացոլման ըստ էության, ինքնագիտակցության գաղափարը, և երկրորդ սեփական Ես-ի գիտակցման գործընթացում մեծապես կարևորեց տրամաբանական մտածողության նշանակությունը: Նրան է պատկանում հանրահայտ «Մտածում եմ, ուրեմն գոյություն ունեմ» արտահայտությունը:

Մեթոդաբանական հաջորդող տեղաշարժերի արդյունքում, փիլիսոփայության մեջ գերիշխող դարձավ հիմնախնդրի ռացիոնալիստական մեկնաբա-

---

[1] Աստվածաշունչ, Ծննդոց Գլ. Գ
[2] Աստվածաշունչ Ժողովող Գլուխ Ա 18:

նությունը: Այս պարագայում ինքնահմացություն և ինքնագիտակցության հասկացությունները բնականաբար նույնացվում են:

Թ. Հոբբսը (1588-1679թթ.) այնուհետև Սպինոզան (1632-1677թթ.) երևույթը մեկնաբանում են բացառապես բնագիտական մոնիզմի, օբյեկտիվ իմացության, ռացիոնալիզմի տեսանկյունից:

Երևույթի մեկնաբանության գործում մեկ քայլ առաջ են գնում սենսուալիստները ինքնաճանաչողության գործում կարևորելով զգայական ընկալման գործառույթը: Այսպես Ջ. Լոկկը (1632 - 1704թթ.) համարում էր, որ մարդը ճանաչում է իր գոյությունը ինտուիտիվ: Այդ ինտուիցիայի հիմքում ընկած են տարրական ինքնազգայությունները, որոնք գիտակցության փաստ են դառնում ռեֆլեքսիայի իմաստավորման արդյունքում:

Ռեֆլեքսիան, նրա կարծիքով, դիտում է, որին ենթարկում է միտքը իր գործունեությունը և դրա դրսևորման եղանակները: Ջ. Լոկկը համարում է, որ զգայությունն ու ռեֆլեքսիան գիտելիքի ձևավորման միայն նախապայմաններ են, իսկ բուն գիտելիքը ստեղծվում է հոգու երեք ընդունակությունների համեմատության, զուգակցման և վերացարկման գործունեությամբ:

Նա պնդում է, որ ռեֆլեքսիվ մտքերը կենսափորձի արդյունք են և, միայն հասուն տարիքի հասնելով, և կենսափորձի կուտակվելու հետ միասին է անհատը սկսում լրջորեն մտածել այն մասին, թե ինչ է կատարվում իր ներսում, իսկ որոշ անհատներ, ընդհանրապես, երբեք չեն մտածում այդ մասին:

Հիմնախնդրի մեթոդաբանական զարգացման գործում հաջորդ նշանակալի ներդրումը պատկանում է Լայբնիցին (1646- 1716թթ.), ով մեկնաբանում է այն հոգեկանի բազմամակարդակ ամբողջության ենթատեքստում:

Լայբնիցը, տարանջատելով հոգեկանը գիտակցությունից, ներմուծում է «պերցեպցիա» և «ապերցեպցիա» հասկացությունները: Առաջինը ենթադրում է ինչ-որ բանի ներկայացվածություն հոգեկանում, երկրորդը դրա գիտակցումը: Ապերցեպցիան, ըստ Լայբնիցի, անհատի սեփական ներքին վիճակների գիտակցումն է կամ ռեֆլեքսիան, որը նշանավորում է իրենով անցում ճանաչողությանը:

Վերոհիշյալ մոտեցումներին զուգահեռ սուբյեկտիվ իդեալիստները առաջարկում են ինքնահմացության հիմնախնդրի սեփական մեկնաբանությունը, որը հետագայում հիմքը հանդիսացավ ինքնահմացության և ընդհանրապես հոգեկան ֆենոմենալիստական մեկնաբանության համար:

Սուբյեկտիվ իդեալիստները բացարձակացնելով մարդու ներքին հոգեկան իրականության նշանակությունը նրա կենսագործունեության համար ինքնահմացության համար իրական, վճռորոշ և նշանակալի են համարում

միայն այն ինչ առկա է մարդու հոգեկանում և այնպես ինչպես առկա է այն այնտեղ, առաջնորդվելով « այստեղ և հիմա» սկզբունքով:

Ինքնահմացության հիմնախնդրի սուբյեկտիվ իդեալիստական մեկնաբանությունը, մենք ինչ, որ տեսակետից նմանեցնում ենք միստիկայի ռացիոնալիստական գիտական մեկնաբանության փորձի, քանզի երկու դեպքում էլ փաստում ենք անհատի սուբյեկտիվ ներքին իրականության, ներքին ապրումների նշանակության բացառիկ կարևորմանը ինքնահմացության գործում:

Մեր կարծիքով, միստիկան սերտորեն առնչվում է մարդու անգիտակցական դրսևորումների հետ, որի վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները դեռևս շատ հեռու են ավարտում և համապարփակ կոչվելուց: Ինչևէ ....

* * *

Ինքնահմացության հիմնախնդրի նկատմամբ մեթոդաբանական վերոհիշյալ բազմաբնույթ մոտեցումները հանճարեղորեն ընդհանրացնում է գերմանական դասական փիլիսոփայության ակնառու ներկայացուցիչ Գ. Հեգելը (1770 - 1831թթ) մարդկային ինքնագիտակցության դրսևորման բարձրագույն ձևեր հռչակելով արվեստը, կրոնը և փիլիսոփայությունը:

Մեկնաբանելով հիմնախնդիրը դիալեկտիկական իդեալիզմի մեթոդաբանական դիրքերից Հեգելը դիտարկում է այն իր իսկ կողմից առաջադրված գիտակցություն, ինքնագիտակցություն, բանականություն (որպես դրանց բարձրագույն միավորում) եռաստիճան համակարգի ներսում:

Առանձնացնելով գիտակցության կառուցվածքում զգայական ընկալող և դատողական մակարդակներ նա մեծապես կարևորում է այն հանգամանքը, որ գիտակցման գործընթացում մշտապես էականորեն առկա է Ես-ը:

«Գիտակցության արտաքին առարկաները նրանք են, որոնք մենք տարբերում ենք մեզնից, և որոնց մենք վերագրում ենք մեզնից անկախ գոյություն: Ներքին առարկաները, դրա հակառակ, որոշություններ կամ կարողություններ են, Ես-ի ուժեր: Դրանք իրարից դուրս գոյություն չունեն: Եվ այն, որի մեջ նրանք գոյություն ունեն, Ես-ն է .... Երբ մենք պատկերացնում ենք առարկան, ապա մենք գիտակցում ունենք և այլն էլ առարկայի մասին: Իսկ երբ մենք պատկերացնում ենք մեր գիտակցությունը, ապա մենք գիտակ ենք մեր գիտակցության կամ ունենք գիտակցության գիտակցում:»[3]:

Ինքնագիտակցությունը, ըստ Հեգելի, Ես-ի ինքնահայեցումն է: Այն ձգտումն է իրացնել իր հասկացությունը և ամեն ինչում գիտակցել իրեն: Այն

[3] Հեգել Փիլիսոփայության ներածություն Երևան 1964,§3 էջ 54,

գործուն է, ունակ վերառելու առարկաների այլագոյը և հաստելու նրանց իրեն հավասար, ինչպես նաև օտարվելու ինքն իրենից և դրա միջոցով իրեն տալու առարկայականություն ու առկա գոյ:

Ինքնագիտակցության որոշակիություն դառնալը, Հեգելի կարծիքով, միաժամանակ նրա ինքնորոշարկումն է և ընդհակառակը: Ինքնագիտակցությունը, նրա կարծիքով, արտադրում է ինքն իրեն որպես առարկա:

Անդրադառնալով ինքնագիտակցության կազմավորման ու շարժընթացին Հեգելը հանճարեղորեն ընդհանրացնում է Ես-ի ձևավորման եռափուլ գործընթաց - մեխանիզմը, որի վերաբերյալ շարունակաբար հատորյակներ են ներկայացնում անձի զարգացման հիմնահարցերով զբաղվող հոգեբանական բազմապիսի տեսություններ շատ դեպքերում այդպես էլ չկարողանալով ամբողջացնել այն:

Ըստ Հեգելի ինքնագիտակցությունն իր կազմավորման և շարժընթացի մեջ անցնում է երեք աստիճաններ:

1. Ցանկության աստիճան, երբ ինքնագիտակցությունը ուղղված է դեպի ուրիշ իրերը: Այս աստիճանում անհատը գիտակցում է սեփական լինելությունը, ինքնությունը, եզակիությունը: Դրա արդյունքում նա սկսում է գիտակցել նաև շրջապատող անսահման իրականության նկատմամբ իր չնչինությունը, անլիարժեքությունը և այդ գիտակցումը, ի վերջո, մղում է նրան ինքնահիրականացման:

2. Տիրապետության և ստրկության հարաբերության աստիճան, երբ ինքնագիտակցությունը ուղղված է դեպի մի ուրիշ, իրեն ոչ հավասար ինքնագիտակցություն: Այս աստիճանում ինքնագիտակցությունը ձգտում է ուրիշի մեջ հայել իր սեփական ազատությունը, որպես ինչ-որ իր համար գոյավոր բան կամ նրանից ստանալ իր ճանաչումը:»: «Իրեն որպես ազատի պնդելու և ճանաչված լինելու համար ինքնագիտակցությունը պետք է իրեն պատկերի որպես բնական առկա գոյից ազատ այլ ինքնագիտակցություն:»[4]: Բախվելով ուրիշին անհատը նրա միջոցով ճանաչում է իր որակները. Նա ճանաչում է իրեն որպես մեկի, որը գոյություն ունի ուրիշի համար: Դրա շնորհիվ նրա Ես-ը իր համար վերածվում է նորույթի, դառնում ուշադրության առարկա, և սեփական եզակիության գիտակցումը վերածվում է սեփական անհատականության գիտակցման: Այս գործընթացը, որպես գերիշխանության և ենթակայության պայքար, բավական կոնֆլիկտային է: Անհատականության ձեռքբերումը, որպես ինքնության այդ օտարում այն պահն է, որի միջոցով ինքնագիտակցությունը ընդունակ է դառնում մասնակից լինելու համընդհանուր ինքնագիտակցությանը կամ ձեռք է բերում «... դրական ազատություն...»

---

[4] Նույն տեղում § 31, 32 37 էջ141 -143:

3. Համընդհանուր ինքնագիտակցության աստիճան, երբ ինքնագիտակցությունը ճանաչում է իրեն ուրիշ ինքնագիտակցությունների մեջ և, ընդսմին, նույնպես հավասար է նրանց, ինչպես նրանք հավասար են հենց իրեն: Համընդհանուր ինքնագիտակցությունը, ըստ Հեգելի, իր ինքության հայեցումն է որպես համընդհանուր ինքնություն: Նա այդպես ինքնություն է ճանաչում ինքն իրեն և ուրիշ ինքնագիտակցություններն ինքնին և այդպիսին է ճանաչվում նրանց կողմից: Ըստ Հեգելի, իր այդ էական համընդհանրության համաձայն ինքնագիտակցությունը իր համար ռեալ է սոսկ այն ժամանակ, երբ նա գիտակցում է ուրիշի մեջ իր արտացոլումը և, որպես մաքուր հոգևոր համընդհանրություն, գիտակցում է իրեն որպես էական ինքնություն:

Ինքնագիտակցության եռաստիճան այս մոդելը ակնառու պատկերում է մարդկային Ես-ի նրա անհատականության ձևավորման ընթացքը և այդ գործում ինքնագիտակցության ու ինքնաճանաչողության իրականացրած գործառույթը:

Հեգելը մարդկային Ես-ի, նրա անհատականության ձևավորումը դիտարկում է, որպես մարդկային էության առանձնացման և միավորման շարունակական գործընթաց, որը իրականանում է բացառապես ինքնաիմացության շնորհիվ, որի բարձրագույն դրսևորումն է ինքնագիտակցությունը:

Հեգելի միտքն այն մասին, որ ռեֆլեքսիան այն բացառիկ մեխանիզմն է, որ հնարավորություն տալիս անհատին դուրս գալու մղումների սահմաններից բացահայտում է այն գործառույթները, որ իրականացնում են ինքնաիմացությունն ու ինքնագիտակցությունը անձի ձևավորման գործում:

«...Օգտվելով ռեֆլեքսիայից, նա (մարդը - ծգ. հեղ) մղումը համեմատում է ոչ միայն նրա բավարարման միջոցների հետ, այլև այդ միջոցները, ինչպես նաև բուն այդ մղումները իրար հետ ու իր էության նպատակների հետ: Ռեֆլեքսիայի որոշմամբ նա կամ անձնատուր է լինում մղումի բավարարմանը, կամ կասեցնում է բավարարումն ու հրաժարվում նրանից...»[5]:

Ընդգծելով ինքնագիտակցող Ես-ի ձևավորման գործում ռեֆլեքսիայի ունեցած հսկայական նշանակությունը Հեգելը տարբերակում է դրա հարաբերական և բացարձակ ձևերը:

Հարաբերական ռեֆլեքսիան տեղափոխում է մարդուն անհրաժեշտության ոլորտ, բացարձակ ռեֆլեքսիան հնարավորություն է տալիս նրան հարաբերվել միայն ինքն իրեն, դառնալ ինքն իր առարկան:

«Դեպի ինքս ինձ ունեցած այս մաքուր հարաբերությունը Ես-ն է, բուն անվերջանական էության արմատը: Դա լիակատար վերացարկումն է այն ամենից,

---

[5] Նույն տեղում §5 էջ 47.

ինչ վերջնական է: Այս դեպքում Ես-ը անմիջական բովանդակություն չունի, այլ միայն ինքն իրեն ունի որպես բովանդակություն» Այդ մաքուր ձևը միաժամանակ նրա բովանդակությունն է:

Այսպիսով Ես-ը, ըստ Հեգելի, բացարձակ ռեֆլեքսիայի արդյունք է: Այն անմիջական ոչ մի բովանդակություն չունի, որովհետև նա միայն գոյություն ունի ամեն մի ուրիշ բանից վերացարկվելու միջոցով...»[6]:

Անհրաժեշտ է նշել, որ հեգելյան գաղափարները վիթխարի ազդեցություն են գործել ինքնագիտակցության և, ընդհանրապես, ինքնաիմացության խնդիրների հետագա ուսումնասիրության գործում մասնակիորեն կամ ամբողջությամբ արտացոլվելով հիմնախնդրի ուսումնասիրությամբ զբաղվող գրեթե բոլոր հոգեբանական տեսություններում:

Ինքնագիտակցության հեգելյան մեկնաբանության անմիջական զարգացում է հանիսանում ինքնագիտակցության դիալեկտիկամատերիալիստական մեկնաբանությունը: Հիմնախնդրի գիտական զարգացման վերոհիշյալ ուղին, ձևավորված մարքսիստական փիլիսոփայության ակունքներում, քննարկում է երևույթը հասարակության պատմամշակութային զարգացման ենթատեքստում որպես հասարակական հարաբերությունների ծավալման անմիջական արտադրանք:

Այս տեսակետից Ֆ. Էնգելսը (1820 – 1895թթ.) բնութագրում է քաղաքակրթության պատմությունը որպես ինքնագիտակցող օրգանիզմների զարգացման գործընթաց:

Անհրաժեշտ է նշել, որ խորհրդային հոգեբանության մեջ շրջանառվող ինքնագիտակցության դիալեկտիկամատերիալիստական մեթոդաբանությունը հիմնված արտացոլման տեսության վրա ձևավորվել է հենց դիալեկտիկամատերիալիստական փիլիսոփայության ակունքներում:

Ամփոփելով ինքնաիմացության հիմնախնդրի մեթոդաբանական շարժընթացի վերլուծությունը անում ենք ընդհանրացումներ, որոնք հիմք է տալիս մեզ՝

1.սահմանելու ինքնաիմացությունը որպես անհատի կողմից սեփական էության, սեփական գոյի վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերման գործընթաց, որը հասարակական հարաբերությունների ակտիվ ներքնայնացման և ինքնաարտացոլման բազմամակարդակ գործընթացում ընթանում է զգայականից դեպի ռացիոնալ իմացություն տարրական ինքնազգայություններից դեպի ինքնագիտակցություն:

---

[6] Նույն տեղում §12 էջ 64:

1.1. եզրակացնելու որ ինքնահիմացությունը իր դրսևորման բարձրագույն ձևերում իրականանում է ինքնագիտակցման գործընթացի ու դրա առանձին ակտերի ակտիվ գործառնությամբ, ինչը հնարավորություն է տալիս անհատին սեփական անձի վերաբերյալ տեղեկատվությունը վերածել տեսական մտածողության առարկայի և ձևավորել սեփական Ես-ի մասին ընդհանրացված պատկերացում Ես կոնցեպցիա.

1.1.1. սահմանելու ինքնագիտակցությունը որպես ինքնարտացոլման բազմամակարդակ գործընթացի բարձրագույն ինտեգրալ մակարդակ, ինքնահիմացության համակարգի առանցքային գործընթաց:

1.1.2. սահմանելու ինքնագիտակցությունը, որպես մարդկային Ես-ի, նրա անհատականության ձևավորման առանցքային մեխանիզմ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աստվածաշունչ UBS Stuttgart, 1990
2. Փիլիսոփայության պատմության համառոտ ակնարկ Երևան 1979
3. Հեգել Փիլիսոփայության ներածություն Երևան 1964
4. Выготский Л.С. Собрание сочинении. М.1984
5. Декарт Р. Избранные произведения. М. 1950
6. Леонтьев А.Н. Избранные психологические произведения. В 2 т. М. 1983
7. Локк Дж. Избранные философские произведения в двух томах. Т.1 М. 1960
8. Материалисты древней Греции. М.1955
9. Маркс К. Энгельс Ф. Сочинения.
10. Проблемы сознания. М. 1966
11. Рубинштеин С.Л. Бытие и сознание. М.1957.,
12. Спиркин А. Г. Сознание и самосознание. М. 1972.,
13. Спиркин А. Г. Философия. М.2001.